



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԻԻ Է

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՉՈՐՐՈՐԴ

5 ՅՈՒԼԻՍ 1874



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ ՆԻ ԸՆԿ.

—1874—

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Դ.

5 ՅՈՒԼԻՍ 1874

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՄԻՍԱԿԵԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ ԷՖ. (Առժամանակեայ կարգեայ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Վաւերացում Նորընտիր երեսփոխանաց .
2. Ընտրութիւն Ազգ. վարչութեան կրօն. ժողովոյ .
3. Ընտրութիւն պակասձ անդամոց Քաղ. ժողովոյ .
4. Վաւերացում նախորդ Ատենագրութեանց .
5. Ազգ. Սահմանադրութեան փոփոխեալ տրամադրութիւնք .
6. Աղթամարայ Կաթողիկոսական կնիքը :

Ի բացակայութեան երեք Ատենապետաց ժամը 8 ին՝ երբ 47 երեսփոխան ներկայ էին, Սրբազան Նախագահին եւ երեսփոխանաց հրաւիրմամբ Միաքեան Խաչատուր Էֆ. առօրեայ ատենապետութեան պաշտօնը կընդունի եւ կը բանայ Ատենանը :

Ներկայ երեսփոխանաց թիւը յետոյ 51 է հասաւ :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Գիտէք որ նախընթաց նիստին կրօն. ժողովոյ ընտրութիւն պիտի ըլլար, սակայն օրը տարածամեկուն պատճառաւ այսօրուան նիստին մնաց : Թէ կրօն. ժողովոյ ամբողջ ընտրութիւնը եւ թէ Քաղ. ժողովոյ պակասձ անդամոց տեղ նորերու ընտրութիւնը ամենահարկաւոր են. քանզի Սահմանադրութիւնը զիս կը պարտաւորէ Վարչա-

կան ժողովոց հետ գործել. ուստի եթէ ժողովները չըլլան՝ չեմ կարող իմ պաշտօնս կատարել. անոր համար կ'անաշարկեմ որ այսօր ամեն գործէ յառաջ յիշեալ ընտրութիւնները կատարուին :

Այս միջոցին գիտողութիւններ կըլլան երեսփոխանաց ոմանց կողմէ թէ տակաւին մեծամասնութիւն գոյացած չըլլալով, ժողովը չը կրնար քուէարկութեան ձեռնարկել կրօն. ժողովոյ ընտրութիւնը կատարելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստոյգ է որ ներկայութեան տուժարին նայելով, ժողովը իւր մեծամասնութիւնը լրացնելու համար տակաւին 10 երեսփոխանի պէտք ունի : Սակայն պէտք է յիշեցնեմ ժողովին թէ նախորդ նիստին մէջ ո-

րոշուած էր որ շարունակաբար երեք բացակայութիւն ունեցող նոյնպէս եւ գրով հրաժարող երեսփոխանաց վերստին հրաւեր գրուին ինչպէս որ գրուեցան, եւ չեկողները հրաժարեալ համարուին: Արդ, անոնցմէ ոմանք հրաւերն ընդունելով եկած են, եւ ոմանք հրաժեշտն կրկնելով չեն եկած. իսկ ոմանք ալ բնաւ պատասխանած եւ եկած չեն: Աւստի եթէ նախորդ նիստին որոշման համեմատ չեկողներն հրաժարեալ համարուին, անոնց թիւն երեսփոխանաց թիւէն բաժնալով եւ մնացածին հետ այսօրուան ներկայից թիւը բաղդաւելով մեծամասնութիւն ունի ժողովը:

Այս պահուս ունկնդիր ժողովրդեան մէջէն ձայն մը լսուեցաւ, որ Ատենադպիր Էֆ. ին դուրս հանուիլը կը պահանջէր, եւ որիչ ձայներ ալ անոր հետեւելով եւ հակառակելով ժողովին հանդարտութիւնը խռովեցին: Յոյն աղմկալից պահուն Ատենադպիր էֆէնտին թէ եւ երիցս Սրբազան Նախագահին դիմեց, բայց նորին Սրբազանութիւնը երկիցս հրամայեց որ երթայ իր աթոռը բազմի, անիշխանութիւնը չքաջալերելու համար. իսկ երրորդին անձամբ իջաւ աթոռէն, եւ Ատենադպիր էֆէնտին թէւէն բռնեց եւ տարաւ աթոռը նստեցուց:

ԻՓԵԿՃԵԱՆ Է. ԷՖ. — Հրաժարեալ երեսփոխանաց մասին դիտողութիւն մ'ունէի ընելու. բայց այսօր տեղի ունեցած անկարգութեան ներկայ գտնուելով իբրեւ երեսփոխան կ'ուզեմ նստիլ այս ժամին երկու խօսք ընել: Կրկնելն աւելորդ է թէ եւ, վասն զի ուրիշ անգամ ալ ըսուած է այս խօսքը թէ ժողովուրդն երբէք իրաւունք չունի անհանդիստ ընել Երեսփոխանական ժողովը. սակայն մեք ալ պէտք է դմեղ այնպէս բռնենք որ տեղի չտանք ժողովրդին այնպէս վարուելու: Լսեցի որ ըսին ժողովրդէն թէ ատենը չբացուած խնդրանքի մը մատուցած են ժողովին: Գիւժանին պարտքն էր ըսել թէ ժողովուրդը եւ մինչեւ իսկ ազգին մէկ անհատն անգամ երբ բողոքելու առիթ մ'ունի եւ Վարչական ատենաներու դիմած ու իւր իրաւունքն անխելի մնացած է, կրնայ գիւժել Ազգ. Երեսփոխանական ժողովին. այս ժողովն ալ պարտականութիւն ունի ընելու եւ պէտք եղած պատասխանը տալ բողոքարկուին: Ասի պաշտօնագէս եւ պարզ կերպիւ ըսել հարկ էր դի-

ւանին, որ չբնաւ: Ես միայլ ըմբռնողութիւն մը կը տեսնեմ ժողովրդեան մէջ. ինք կողքայ թէ իրաւունք ունի բողոքել այս ժողովին, միանգամայն կը կարծէ թէ իւր բողոքելու իրաւունքովն իրաւունք ունի նաեւ անհանդիստ ընելու ժողովն, անոր համար բաւական չփոթութեանց տեղի արուեցաւ, որուն մեք երեսփոխանքս ալ պատասխանատու ենք. ասանկ շրջփոթութիւններ ուրիշ անգամ ալ եղած են, պէտք է որ ասոնք մեղի գլուշութեան խրատ մ'ըլլան, ապագային մեր վարձուքն ըստ այնմ սուղելու համար:

(Ժողովրդէն մէջէն ձայն մը լսուեցաւ)

Ես ուրիշ անգամ ալ ըսած եմ որ ծափահարութիւն ընդունելու համար չեմ խօսիր. ժողովրդեան իրաւունքը պաշտպանելու համար ոչ կ'եցցեմ եւ ոչ թախաբանութեամբ պէտք չունիմ. եթէ մեք այնպէս վարուելու ըլլանք ինչպէս որ հիմա ըսի, ժողովուրդը մեզմէ առած պարզ պատասխանէն համոզուելով այս տեսակ ապօրէն միջոցներու չդիմէր:

Գալով հրաժարեալ երեսփոխանաց խնդրոյն այս խնդրին արդէն նախորդ նստին մէջ պէտք էր անաջին խնդիր ըլլար, եւ վերջը դիւանին ընտրութիւնը կատարուէր. ես ալ իմ դիտողութիւնն ըրի այն օրը, բայց չպնդեցի. դժբաղդաբար տեսայ որ ժողովը խոհեմութիւն չըրաւ եւ աճապարանօք քուէարկեց. անոնց դէմ է իմ խօսքս՝ որոնք իրաւունք ունենալ կը կարծեն երբ այնպէս արտօրանօք որոշումներ կը նեն, վասն զի արդէն ուշ կուգան եւ ժամերով իրենց կսպասենք: Այսօր ամեն ընտրութիւններէ յառաջ պարտքերնիս է բոլոր հրաժարականները նայիլ, ընդունուելու են թէ ոչ որոշել, եւ մտոյ անցնիլ ընտրութեանց: Վասն նաեւ երեսփոխաններ՝ որոնց սրաշտօնավարութեան չբջանը լրացած է թէ եւ, բայց գեւ կը շարունակեն. պէտք էր անոնց տեղ ընտրուածները դային, սակայն այդ ընտրութիւններն ալ կատարուած չեն: Սրբազան Նախագահի կը պնդէ որ Կրօն. ժողովոյ ընտրութիւնն ստիպողական է, չեմ կրնար կրօն. ատենակազմապէս իմ պաշտօնս կատարել, եթէ Վարչական ժողովներն ամբողջապէս կազմուած չըլլան: Բայց աստիճանէն իր թէ միւսները զոհուելու են, ես կը սեմ թէ միեւնոյն նախանձախնդրութիւնն ունենալ պէտք է նաեւ ասոնց համար: Ամե-

նէն գլխաւորը ներկայ հրաժարականաց խնդիրն է. նախ դայս լուծել պէտք է եւ ապա անցնիլ Կրօն. ժողովոյ ընտրութեան քուէարկութեանը: Իսկ այս ամենն ընելէ յառաջ, կը կրկնեմ որ ժողովուրդն իրաւունք ունի թէ ոչ բողոքել Երեսփոխանական ատենին, այս կէտը պէտք է պարզապէս յայտարարուի ժողովրդին. վասն զի այս ժողովին պարտականութիւնն է ժողովրդէն եկած խնդիրներն ալ անտես չառնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իփէկճեան Էֆ. ի առաջարկութեան պէտք է պատասխանեմ թէ ստոյգ է որ ժողովուրդն ոչ թէ բողոքագիր՝ այլ ազերսագիր տալու իրաւունք ունի. բայց առաւօտուն ազերսագիր տալու եւ ցորեկին կատարուիլ պահանջելու իրաւունք չունի. պէտք է գոնէ 15 օր սպասել. եւ ժողովին կը մնայ օր մը որոշել ընտրութեան ատենը, եւ այն օրը կուգայ ազերսարկուն իւր խնդրոյն վճիռը լսելու: Իսկ այսօր ժողովուրդը խնդրագիր մը տուեր է ըսիք. այդ ոչ ես գիտեմ եւ ոչ ընկերներս գիտեն տակաւին. դուք գիտէք եղեր:

ԻՓԵԿՃԵԱՆ Է. ԷՖ. — Ատենապետ Էֆ. այդ վերջին խօսքդ չեմ ընդունիր եւ կը բողոքեմ. ինչ ըսել կուզէք որ 15 օրէն ըսելով: Իմ բացատրութեանցս ձեւը փոխեցիք. ժողովուրդը ըրի մ'առաջ ինչպէս էր: Կրօն. ժողովը կը պաշտար. եթէ ինծի պէս ականջներ ունէիք՝ հարկաւ դուք ալ լսեցիք. միթէ միայն Ես դիտեցած կըլլամ. այդ խօսքը չեմ ընդունիր, կամ ես ատէք եւ կամ հաստատեցէք:

(Աւստի լսուեցաւ)

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Երեսփոխանական պատկառելի ժողովին կառաջարկեմ նորէն, Վարչական ժողովոց ընտրութիւններն ընդ փոյթ կատարել, վասն զի յիստ կարեւոր են: Անցեալ նստին կարգն եկած էր արդէն, բաւական խօսքեր եղան եւ ընտրութիւնն այսօրուան մընաց. հիմա նորէն վէճի տակ դեռն աւելորդ է: Գալով այն մասին թէ ժողովուրդը խնդիր ունի. այն անստորագիր նամակ մը բերին ինձ այս առաւ, եւ ես ալ դիւանին գրեցի: (Ընթացիւ խորհրդակցութեամբ): Արեւի ժողովուրդը ներկելի է մեզ խօսիլ, թէ ոչ դուք պիտի խօսիք: Երբ այդ խնդրագրին խօսքն իմացանք, ըսինք թէ խնդրոց կարգը պիտի մտնայ. ալ ասկէ անդին խօսիլը ժողովը ժամալաճառ ընել է: Հոս այս ժողովին մէջ այն որ երեսփոխան

չէ, իրաւունք չունի խօսելու. եւ եթէ խօսիլ յանդգնութիւն է, եւ ես պիտի ըսեմ որ պարզապէս խռովարար է: Կը տեսնեմ որ գործերը գէշ վիճակի հասեր են, անկեղծութիւն բնաւ չէ մնացած. այս բոլոր ցոյցերը եւ յուշումները մի միայն Սահմանադրութիւնը տապալելու կը ծառայեն: Գիտե՞ք ինչու համար ուխտեցի Սահմանադրութեան վրայ. չէ թէ անոր համար որ դիւրաւ քաշելիք բան մըն է, այլ անոր համար որ եթէ Սահմանադրութիւնը տապալի, Ազգին հինգ հարիւր տարուան իրաւունքներն ու մեր հարց քրտամբքն ու արեւմտը ձեռք բերուած բոլոր արտօնութիւններն ալ կրնան անոր հետ կորնչիլ, այն պատճառաւ ուխտեցի եւ պահպանել կուզեմ. դուք ալ տապալելու մ'աշխատիք:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Կը տեսնեմ որ ժողովրդեան մէջ խառնիճազանճ մաս մը կայ որ Սահմանադրութեան թշնամի են, որ կուգան հոս երեսփոխանութիւնը ճնշելու. ես կառաջարկեմ դոցեւ այսօրուան նիստը, եւ այսուհետեւ կարգ դնել ժողովրդոց հոս ներկայութեանը, անանկ որ խառնիճազանճը չկարենայ հոս խանիլ եւ խախտել Երեսփոխանութեան նիստերը:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ամենին թող չեմ տար որ այսօր ատենը գոցուի. անպատճառ Կրօն. ժողովոյ ընտրութեան քուէարկութիւնը պիտի կատարուի. պէտք չէ որ երեսփոխաններէն բնաւ մէկը դուրս ելնէ, մինչեւ որ զմեզ ձեծելով կտոր կտոր ընելով դուրս չընեն. եթէ ժողովրդին պօռալուն կամ պօռացնելուն համար երեսփոխաններէն մէկը ժողովէն դուրս ելնէ, մարդ չէ. ես այնպէս կ'ըմբռնեմ մեր ժողովին աշխատութիւնը:

ԻՓԵԿՃԵԱՆ Է. ԷՖ. — Ատենապետ Էֆ. ինծի համար ըսած խօսքը կամ ետ առնէ եւ կամ հաստատէ ըսի. կսպասեմ իւր պատասխանին: ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վստահացէք, Իփէկճեան Էֆ. որ այն խօսքը իբրեւ ի ձեր հեճուկս չըսի, այլ յայտնել ուղեցի թէ ինչ որ դուք կ'ըսէիք, մենք զայն չգիտէինք:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ Այս միջոցին աղմուկն հանդարտած ըլլալով, ժողովը ըստ առաջարկութեան Սրբազան

Նախագահին առաջնութիւն տուաւ Կրօնական ժողովոյ ընտրութեան խնդրոյն . եւ քուէարկութեան ձեռնարկուելով, քուէհամարի համար քննիչ կարգուեցան :

- Տ. Մատթէոս վարդապետ Իզմիրլեան
 - Տ. Գէորգ քահանայ Խասգիւղի
 - Սիմոն էֆէնտի Նորատունկեան
 - Սիմոն էֆէնտի Միքայէլեան :
- Քուէհամարը կատարուելով հետեւեալ արդիւնքն ունեցաւ .

Թիւ քուէարկուաց 47 . ուսկէց 1 քուէ պարսպ ելնելով՝ մնաց 46 :

Համագումար ժողովոյ ընտրելեաց ցանկէն բացարձակ առաւելութեամբ ընտրուեցան հետեւեալ եկեղեցական Հայրերը .

- 1. Տ. Խորէն եպիսկոպոս Նար-Պէյ քուէ 35
- 2. Տ. Խորէն վարդապետ Կիրօյեան » 44
- 3. Տ. Ներսէս » Ասլանեան » 42
- 4. Տ. Կարապետ » Սերոբեան » 41
- 5. Տ. Յովհաննէս » Փափաղեան » 41
- 6. Տ. Գէորգ » Սամաթիոյ » 39
- 7. Տ. Ամբրոսիոս » Իսկէնտէրեան » 28
- 8. Տ. Չաքարիա » Զիւմրիւթճե. » 25
- 9. Տ. Գրիգոր քահանայ Աճէմեան » 42
- 10. Տ. Արիստակէս » Սամաթիոյ » 35
- 11. Տ. Սուքիաս » Մայրեկեղեց. » 31
- 12. Տ. Վրթանէս » Միջագիւղի » 29
- 13. Տ. Երեմիա » Խասգիւղի » 25
- 14. Տ. Գրիգոր » Աբամեան » 24

Գիւանը սոյն ընտրութեան արդիւնքը ժողովին ներկայացնելով, ամբողջապէս Կրօն ժողովոյ ընտրութիւնը վաւերացաւ ժողովէն :

ՎԱԻԲԱՅՈՒՄ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՑ

Եկեղեցական երեսփոխաններէն պակասած երեք երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւն կատարուած ըլլալով, սոյն ընտրութեան տեղեկագիրը գիւանը ներկայացուց ժողովին, որոյ պատճէնն ահաւասիկ .

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգային Ընդհանուր ժողովոյ

Վախճանմամբ եւ հրաժարմամբ պակասեալ Եկեղեցական երեք երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութեան համար Ձեր բարձր Սրբազնութեան հրամանաւ առաջին անգամ յունիս 12 ընտրողաց 34 ի մասնակցութեամբ քուէարկու-

թիւնն ու քուէհամարը կատարուելով՝ բացարձակ առաւելութիւն ստացող չեղաւ, հետեւապէս առաւելագոյն քուէ ստացողներէն հետեւեալ երկուստիկ ընտրելեաց ցանկը պատրաստուեցաւ, որ է .

- 1. Գրիգոր քահանայ Աբամեան քուէ 36
- 2. Սուքիաս » Մայր եկեղեց. » 32
- 3. Սահակ » Միջագիւղի » 28
- 4. Երեմիա » Խասգիւղի » 27
- 5. Խորէն վարդապետ Կիրօյեան » 21
- 6. Կարապետ » Սերոբեան » 14

Որոց վրայ երկրորդ անգամ յունիս 19 ընտրողաց 70 ին մասնակցութեամբն համեմատական քուէարկութիւնն ու քուէհամարը կատարուելով համեմատական առաւելութեամբ քուէայց երեսփոխան ընտրուեցան .

- 1. Խորէն վարդապետ Կիրօյեան քուէ 30
- 2. Կարապետ » Սերոբեան » 40
- 3. Սուքիաս քահանայ Մայր եկեղեց. » 36

Արդ՝ սոյն ընտրութեան արդիւնքը տեղեկագրելով Ձերդ բարձր Սրբազնութեան կը խնդրեմք որ բարեհաճիք Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ յառաջիկայ նիստին ներկայացնել ի վաւերացումն :

Մնամք անձնուէր Պաշտօնեայք Առաքելական Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց

19 Յունիս 1874

Ի Պատրիարքարանի Հայոց

Գում-գարու Ի Դիմաց Ընտրողական ժողովոյ
Առեւ-դար Առեւ-դար
Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍ.

Սոյն տեղեկագիրն առանց զիտողութեան քուէի զրուելով, ընդհանուր հաւանութեամբ ընդունուեցաւ, եւ կատարուած նոր ընտրութիւնք վաւերացան Ընդհ. ժողովէն :

ՀՐԱԺԱՐԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՑ

Գիւանը հրաժարեալ եւ բացակայ երեսփոխանաց կողմէն հասած նամակները ներկայացնելով կը կարգայ, որ ահաւասիկ

Բերա, 27 Յունիս 1874

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ընդունեցայ Ձեր Սրբազնութեան նամակը որով կը բարեհաճիք ծանուցանել ինձ թէ Ազ-

գային Ընդհանուր ժողովը իւր գիւանին նորոգութեան պայմանաժամը լրացած ըլլալուն իւր վերջին նիստին մէջ նոր ընտրութիւն կատարելով, քուէից առաւելութեամբ երկրորդ ատենապետ ընտրած է զիս, եւ կը հրաւիրեմ սոյն կարեւոր պաշտօնն կատարելու Ընդհանուր ժողովոյ նիստերուն ներկայ գտնուելով :

Կը ցաւիմ որ անկարելի է ինձ կատարել Ձեր Սրբազնութեան այս հրամանը : Ընդհանուր ժողովը պէտք է որ ուրիշ մէկը ընտրէ իրեն երկրորդ ատենապետ . ես արդէն երեսփոխանութենէ ալ շատուց հրաժարեալ եմ,

Մնամ Ամենապատիւ Սրբազան Հօրդ
Ամենախոնարհ ծառայ եւ որդի
Գ. Ս. ՕՏԵԱՆ

Ամենապատիւ Հայր Սրբազան

Պատիւ ունեցայ ստանալու Ձեր բարձր Սրբազնութեան ամսոյս 23 թուականաւ նամակը, որով իմ Ազգ. երեսփոխանութենէ տուած հրաժեշտիս վրայ խօսելով ետ առնելս կը կամիք :

Ազգային պաշտօններէ քիչ մը ատեն ետ կենալու որոշում ըրած ըլլալուս, անկարելի կը տեսնեմ նորէն երեսփոխանութիւն յանձն առնել եւ կը խնդրեմ որ ներողամիտ լինիք ինձ, որ պատիւ համարիմ լինել

29 Յունիս 1874
Կ. Պօլիս Ձերդ Ամենապ. Սրբազնութեան
Խ. Մ. ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԿԷՕՋԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգային Կեդրոնական Ընդհանուր ժողովոյ

Ձեր Սրբազնութեան օրհնածիր նամակը ընդունեցի՝ որով կը հրաւիրելիք զիս շարունակել երեսփոխանական պաշտօնս, բայց ցաւօք սրտի կը խոստովանիմ որ իմ անհրաժեշտ գործերս չեն ներեր Ձեր Սրբազնութեան հրաւերին անձամբ պատասխանելու . ուստի կ'երկրորդեմ իմ հրաժարականս եւ կ'աղաչեմ ընդունել տալ երեսփոխանական պատկառելի ժողովոյն :

Մնամ Ձերդ Ամենապատիւ Սրբազնութեան
Խոնարհ ծառայ
ՅՈՎՍԷՓ ԱՂԱՄՃԱՆԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Հայր

Ձիւ ազգային երեսփոխանութեան պատիւն ու պաշտօնն վայելելու եւ Ազգին ծառայելու հրաւիրելու շնորհք ընկնուող համար խորին շնորհակալութիւնս յայտնելով հանդերձ, զանա-

զան պատճառներով հրաժարականս կրկնելու ստիպուած ըլլալուս համար ալ ներումն շնորհելիք խոնարհաբար կաղաչեմ :

1874 Յուլիս 5, Բերայ Խ. Մ.
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր

Ազգային պաշտօն ըլլալով, երկու պաշտօն կայ վրաս, մէկն է Ազգային երեսփոխանութիւն, իսկ միւսն է Բերայի կալուածոց Հոգաբարձութեան անդամակցութիւն :

Ասոնց երկուքէն ալ կը հրաժարիմ :
Պատճառը՝ անձնական զբաղմանցս ծանրութիւնն է :

Ուստի կ'աղաչեմ զՁեր Սրբազնութիւնը, որ սոյն հրաժարագիրս ներկայացնել բարեհաճիք թէ Ընդհանուր եւ թէ Քաղաքական ժողովոց :

Մնամ Ձերդ Սրբազնութեան եւ Ազգիս
5 Յուլիս 1874
Բերա Անձնանուէր ծառայ
ՄԱՏԹԷՍՍ Մ. ԱՅՎԱՏԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Հայր

Փոքր տկարութիւն մը որ երէկ իրիկուընէ ի վեր զիս կը տանջէ՝ թող չը պիտի տայ որ այսօրուան Ընդհանուր ժողովոյն ներկայ գտնուիմ ընդդէմ Ձերմ բաղձանքիս :

Ձեր բարձր ներողամտութիւնը խնդրելով մնամ միշտ

5 Յուլիս 1874 Ձեր Վ. Սրբազնութեան
Պէշիկթաշ Ամենախոնարհ ծառայ եւ որդի
ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Տէր

Ձեր բարձր Սրբազնութեան ամսոյս 25 թուականաւ ուղղած հրամանագիրն ստանալու պատիւ ունեցայ, որով Ընդհանուր ժողովոյ նիստերուն կը հաճիք հրաւիրել զիս երեսփոխանի պաշտօնս կատարելու : ժողովոյ նիստերէն բացակայ գտնուելուս պատճառը անձնական տկարութիւնս է միայն, որ եթէ կազդուրի պատրաստ պիտի գտնուիմ Ձեր Սրբազնութեան հրամանը կատարելու, որ այնքան քաղցր եւ պատուական է ինձ համար :

Մնամ համբուրելու Սուրբ աջոյդ
2 Յուլիս 1874
Խակիւտար Ամենախոնարհ ծառայ
ԱԼԻԲՍԱՆ ՍԱԲԱՏԵԱՆ

Վսեմախայլ Ատենապետ էֆէնտի
Խիտ ստիպողական պատճառ մը կարգիլէ
զիս այսօր ընդհանուր ժողովոյդ ներկայ գտնու-
ելէ :

5 Յուլիս 1874

Մնամ խորին յարգանք
Յ ԿՐՃԻԿԵԱՆ

Ժողովականաց ոմանց առաջարկութեամբ
Տատեան Առաքել Սիսակ Պէյի պատճառարան-
եալ հրաժարագրին ընթերցուիլ կա մնաց :

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. էֆ. — Օտեան էֆ. է-
րէն հրաժարել է գրելով ինչ ըսել կուզէ :

ԱՏԵՆԱԳՊԻՐ էֆ. — Կարծեմ ըսել կուզէ թէ
5 անգամ բացակայ գտնուողներուն կարգէն եմ
արդէն :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. էֆ. — Մի գուցէ կան-
խաւ հրաժարական զրկած եւ ժողովին չնե-
րկայացած ըլլայ . որովհետեւ լսած եմ, Այվազ-
եան էֆ. ալ հրաժարական մը զրկած է եւ ցարդ
չէ ներկայացած ժողովին :

ԱՏԵՆԱԳՊԻՐ էֆ. — Ես նոր ընտրուած ըլ-
լալով, այս նիստին համար պատասխանատու
եմ, եթէ զանցառութիւն մը պատահի : Այն հը-
րաժարականները որ նախորդ նիստերուն մէջ
եկած եւ կարդացուած չէին, զանոնք բերել
տուած եմ, եւ հոս պատրաստ են եթէ ժողովդ
կը հաւանի կարգամ զանոնք :

Ժողովին հաւանութեամբ կը կարդացուին
հետեւեալները :

Ամենապատիւ Բարձր Սրբազան Հայր Նա-
խագահ Ազգ. Կեդր. Երեսփ. ժողովոյ

Մեր անձնական գործոց պատճառաւ մայ-
րաքաղաքէդ մեկնիլ հարկ ըլլալով, եւ մօտ
ժամանակի մէջ ալ վերագաճնալու անյոյս, ըս-
տիպուած եմ ներկայիւս Երեսփոխանական ժո-
ղովոյ անդամակցութենէ հրաժարուիլ :

Ընդունիլ աղաչելով մեր այս հրաժարականը
20 Սեպտեմբեր 1875

Տրապիզոն Մնամ միշտ Ազգիս եւ Ձեր
Սրբազնութեան անձնուէր
Ա. Ա. ԷԼՄԱՍԵԱՆ

Վսեմախայլ Ատենապետ էֆէնտի, Ազգային
Երեսփոխանական ժողովոյ

Երեսփոխանական հրաժարականս՝ զոր պաշ-
տօնական սեղանին վրայ դնել կը պարտաւորիմ
պատճառարանեալ՝ բայց պարզ է :

Զպատելը՝ օրինաւորութեան դէմ չէ :

Անուրանալի է որ, Ազգին օրուան տաղ-
նապը՝ անձնութիւնս կը խնդրէ եւ ոչ զիջուած
Ո՛վ կ'ուզէ իր ստանձնած պաշտօնին առ-
ջեւ ընկրկիլ :

Բայց երբ, ժողովրդեան մէկ մասը իբր
յուզիչ՝ կը վանուի իւր սկզբանցը համար, մինչ-
դեռ անդին մաս մ'ալ անձայն եւ աննպատակ
անտարբերութեան մէջ կը կենայ :

Երբ, որոշուած եւ անհրաժեշտ աղաղակ-
ները՝ չթուանքներու եզերքը կսպառին .

Երբ, ընդհանուրին շահը՝ մասնաւորու-
թեան զոհողներ՝ իրենց դերը յաղթական կը շա-
րունակեն :

Երբ, Ազգային կենսական խնդիրներ՝ զի-
ւաններու մէջ թափառիկ կը մնան :

Երբ, Վարչական հակաս որոշումներ՝ զի-
րար վանելով, ընդարձակ դաւառներ անխա-
նութեան կը մղեն :

Երբ, Երեսփոխանական մեծամասնութիւն
մը՝ զիւրանագիտական գաղտնիքներու գործիք
կ'ըլլայ :

Երբ, անյանցը՝ յանցաւոր, եւ յանցաւորը՝
անյանց կը նկատուին :

Երբ, յանուն օրինապահութեան՝ այնչափ
նուիրական օրէնքներ անպատիժ կը զեղծուին :

Երբ, ատենական կախալոտ բացագանչու-
թիւններ՝ տակաւին համոզումներու վրայ կը
ներգործեն :

Երբ, ճշման եւ արդիւնի խնդրոց պատրու-
ակին տակ՝ ընդհ. ժողովէն գուրս, Երեսփո-
խանական ժողովոյ մը գոյութիւնը կ'ենթադ-
րուի :

Երբ, Ազգային-ժողովը երկփեղկելու զիտ-
մամբ բարձրերէ եկած կոնդակներ, հրաման-
ներ պաշտպանութիւն կը գտնեն Երեսփոխա-
նութեան մէջ :

Երբ, մէկ խօսքով, Ազգ. Վարչութիւն մը
գրգռիչներ ցանկով, Մշեցիին ու Սամաթիացիին
իրարու դէմ յարուցած առեւտր, եւ, իբրեւ Ազ-
գային Երեսփոխան, այն Վարչութեան դէմ գա-
տապարտութեան քուէ չեմ կարող տալ . . .

Այնպիսի արշտօնի մը, կրնամ, որուն ոչ
դատաւորական եւ ոչ դատախազական ըլլալը
յայտնի է, ինչպէս կրնամ խղճի մտօք ծանա-

յել, առանց Ազգին ակնկալութիւնները խաբե-
լուի . . .
Խղճի այս դատապարտութիւնն է, որ ա-
ւելի ձեռնհասի մը թողելու կատիպէ զիս իմ ե-
րեսփոխանական աթոռս :

Մաղթելով յաջողութիւն ընդհանուր անա-
չաւ քննութեան մը, զոր միակ միջոց կը հա-
մարիմ իրաց այս անկանոն կացութեան վերջ
տալու .

19 Ապրիլ 1874

Թօփհանէ-օղլու
Երեսփոխանական

Մնամ

Անձնուէր Ազգիս
Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Երեսփոխանաց ոմանց առաջարկութեամբ
Տատեան Առաքել Պէյի եւ Այվազեան Աբրա-
համ էֆէնտիի պատճառարանեալ հրաժարական-
ները մէկ գի զրուելով, միւսները քուէի զըր-
ուեցան, որք են

- | | | |
|----------------|---------|--------|
| 1. Օտեան | Գրիգոր | էֆէնտի |
| 2. Գարակէօղեան | Կարապետ | » |
| 3. Աղամճանեան | Յովսէփ | » |
| 4. Փանօսեան | Կարապետ | » |
| 5. Այվաթեան | Մատթէոս | » |
| 6. Էլմասեան | Աւետիս | » |

Եւ ընդհանուր հաւանութեամբ ընդունուեցան :

Ատենադպիր էֆէնտին կը յայտարարէ թէ
երկու Երեսփոխան հայրենիքին գացած են շա-
տոնց հետէ եւ տեղերնին բաց մնացած, որք են

Բագրատունի Թաղէոս էֆէնտի
Պոյաճեան Յարութիւն »

Նոյնպէս մէկ եկեղեցական Երեսփոխան պաշ-
տօնով դուրս գացած է, որ է

Տ. Մամբէ Եպիսկոպոս :

Ասոնք ալ քուէի զրուելով, ընդհանուր
հաւանութեամբ իբրեւ հրաժարեալ ընդունուե-
ցան ժողովէն :

Ատենադպիր էֆէնտի կը յայտնէ նաեւ թէ
զիւանը պարտաւոր է եղած սխալմունք մը ծա-
նուցանել :

Փափազեան մահտեսի Յարութիւն էֆէնտի
Գ. վիճակաւ դադարեալ Երեսփոխաններէն ըլ-
լալով, իւր տեղը նոր ընտրութիւն չկատարուած,
քանի մը նիստերու շարունակ բացակայ գըտ-
նուելուն համար անունը ներկայութեան տու-
մարէն սրբուեր է : Նոյնպէս շիւմրիւզեան Ղա-
րիպճեան էֆէնտի առանց ազգարարութեան

հայրենիք երթալով եւ արդէն վերադարձած
ըլլալով, շատ մը նիստերու բացակայ գտնուե-
լուն պատճառաւ ներկայութեան տումարը գը-
րոզ զիւանադպիրն անոր անունն ալ սրբեր է
ինքնին :

Այս երկուքն ալ քուէի զրուելով, ընդհա-
նուր հաւանութեամբ իբրեւ հրաժարեալ ըն-
դունուեցան ժողովէն :

Ատենադպիր էֆէնտի նոյնպէս հրաւիրեալ
եւ ներկայացեալ Երեսփոխանաց անունները
ծանոյց . որք են

1. Ասլանեան Ստեփան վաչա
2. Սերվիլէն էֆէնտի
3. Զարդարեան Գէորգ էֆէնտի
4. Տօքթօր Ի. Թիւճեան էֆէնտի
5. Ճարտարապետ Սենեքերիմ էֆէնտի
6. Յարութիւնեան Նիկողոս էֆէնտի
7. Տօնէլեան Յակոբ էֆէնտի

Եւ յայտնեց թէ նախընթաց նիստին որոշման
համեմատ ասոնց երրորդ բացակայութիւնը
արդեօք լրացած եւ հրաժարեալ պիտի համար-
ուին : Հարկ է որ ժողովը իր քուէովը որոշէ :

Իֆէկիճեմ էֆ. — Կը զիտեմ թէ քանի որ
ժողովը արդէն որոշած է որ 5 անգամ շարու-
նակ բացակայ եղողներն ինքնին հրաժարեալ
են, եւ որովհետեւ յիշեալ 7 Երեսփոխանաց
վերջին ազգադիր ալ զրկուած է, հետեւապէս
խնդիրը վերջացած կը համարիմ եւ քուէի դնե-
լու հարկ մը չեմ տեսներ :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ էֆ. — Կը զիտեմ թէ քանի
որ յիշեալ 7 Երեսփոխանք չորս հինգ նիստերէ
ի վեր չեն եկած եւ ժողովը նորէն հրաւիրած
է, պէտք է երկու նիստ ալ համբերել :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. էֆ. — Խնդիրը պարզ է .
2 անգամ իրարու վրայ բացակայ գտնուողն ի-
րաւունք մը ունէր ազգարարութիւն ընդունե-
լու, որպէս զի երրորդ անգամուն եթէ նորէն
չներկայանայ՝ հրաժարեալ համարուի : Բայց ա-
սոնք չորս հինգ անգամ բացակայութիւն ու-
նենալէ ետեւ վերջին ազգարարութիւն ընդու-
նած ըլլալով, իրաւունք չունին ըսել Մամի-
կոնեան էֆէնտիի կարծեացը համեմատ թէ ի-
րենց չորս հինգ նիստերու բացակայութիւնը
ջնջուած է : Քանի որ վերջին ազգարարութիւ-
նը եղած է, ալ խնդիրը վերջացած կը հա-
մարուի :

Իֆէկիճեմ էֆ. — Ես կը յիշեմ որ նախըն-
թաց նիստին միայն երեք անգամ բացակայու-

Թիւն ունեցող երեսփոխանաց յորդորական նա-
մակ գրել որոշուեցաւ . բայց չեմ յիշեր որ հը-
րաժարեալ երեսփոխանաց ալ նամակ գրելու
որոշում եղած ըլլար . իմ գիտցածս հրաժարա-
կանաց խնդիրն ետքի թողուլ որոշուեցաւ :

Երեսփոխաններէն ոմանք հարցուցին թէ ,
այդ երեսփոխանաց գացած հրաւիրագրին մէջ
յայտնապէս ըսուած է թէ այս վերջին ազգն է ,
եւ եթէ այս անգամ չգան՝ հրաժարեալ պիտի
համարուին ,


[Faint, mostly illegible text in the left column, likely bleed-through from the reverse side of the page.]

Վիւանին հրաւիրմամբն՝ Վիւանապետ է-
ֆէնտին պատասխանեց թէ այդ բացորոշ արա-
մագրութիւնը յիշուած չէ :

Այս միջոցին Ատեանը գոցելու ժամը հա-
սած ըլլալով , Սրբազան Նախագահին հրամա-
նաւ գոցուեցաւ ժամը ճիշդ 40 ին , սոքն 7 և
րեսփոխանաց հրաժարման խնդիրն անորոշ
մնալով :

ԱՍՆԱԳՊԻ
Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ԱՍՆԱԳՅԵ
Խ. Պ. ՄԻՍԱԿԵԱՆ




[Faint, mostly illegible text in the right column, likely bleed-through from the reverse side of the page.]

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ



ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԵՏՈՒԿԻՆ



Կը ճախոշի ի Գիշանառան Պատրիարքարանի, և կը գրաշ-
նոշի Եկեղեցեաց բանկալները: